

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մարտին Մանուկյան

*Եվրասիա միջազգային համալսարանի,
իրավագիտության ամբիոնի դասախոս*

ՀՀ փոփոխված Սահմանադրությունը արդիական է դարձել իշխանությունների բաժանման և պառլամենտարիզմի հիմնախնդիրներին վերստին անդրադառնալու և դրանց իրավաբանական տեսանկյունների գիտական մշակման անհրաժեշտությունը: Հոդվածում անդրադարձ է կատարվել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ծագման ու զարգացման պատմական ակունքներին, իշխանության թևերի փոխադարձ կապին, դրանց հակակշիռների ու զսպումների համակարգին:

Հիմնաբառեր. իշխանությունների բաժանում, պառլամենտարիզմ, Սահմանադրություն, աստվածաշնչյան հիմունքներ, օրենսդիր, գործադիր, դատական, Աստվածաշունչ, թագավորական իշխանություն, աշխարհի առաջին գրավոր Սահմանադրություն:

Հայ իրականության մեջ իր բնույթով և թեմատիկ ընդգրկումով հազվագյուտ ուսմունասիրությունների շարքին դասվող **«Իրավունքի և օրենքի, դատարանի և արդարադատության աստվածաշնչյան հիմունքները»** աշխատությունում հեղինակը՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆիկ Պետրոսյանը, Աստվածաշնչի բարոյականության լույսի ներքո վերարժևորելով իրավունք և օրենք, դատարան և արդարադատություն գաղափարները, համոզիչ կերպով ցույց է տվել, որ դրանց ակունքները, ինչպես որ համամարդկային բազմաթիվ այլ արժեքներինը, գտնվում են ավելի քան 3000 տարի առաջ ստեղծված Հին Կտակարանում և մինչև

այժմ չեն կորցրել իրենց պատմական և հասարակական արժեքը:

Հեղինակը հիմնավորել է, որ պատմական այդ փաստաթղթից են սկիզբ առել ազատության, մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության, ինքնակալության և բռնության վերացման, մենատիրության և ամբողջատիրության սահմանափակման, նույնիսկ իշխանության տարբեր ճյուղերի միջև հակակշիռներ և զսպումներ ստեղծելու գաղափարները, և որ իրավունքն ու նրա հիմնարար ճյուղերը, դատարանն ու արդարադատությունն աստվածային ծագում ու բովանդակություն ունեն¹:

Մեզ՝ իրավաբաններին համար առավել քան կարևոր է, որ իրավունքի, օրենքի, անկախ դատարանի և արդարադատության ակունքները ևս գտնվում են պատմական և հնագիտական ուսումնասիրություններով ապացուցված իրապատում հանդիսացող Աստվածաշնչում: Մինչդեռ, եթե մարդկային հասարակության պատմության մեջ Աստվածաշնչի հսկայական դերն ու նշանակությունը խորապես ուսումնասիրվել է տարբեր տեսանկյուններից, ապա մինչև վերջին տասնամյակը, որպես իրավունքի անմիջական աղբյուր, որպես Սահմանադրություն՝ այն ընդհանրապես չէր հետազոտվել: Արևմտյան և եվրոպական, այդ թվում հայ և ռուս բազմաթիվ հետազոտողներ (աստվածաբաններ, պատմաբաններ, փիլիսոփաներ, իրավագետներ) աստվածաշնչյան իրավական հարցերին (պայմանականորեն՝ օրենսդրական մասին) անդրաձարձել էին հատվածաբար՝ կապված նրա ընդհանուր մեկնությունների հետ:

Աստվածաշնչի՝ որպես աշխարհի առաջին գրավոր Սահմանադրության, որպես իշխանությունների բաժանման և հավասարակշռման, դատարանի և արդարատության անկախության մասին իրավունքի պատմական աղբյուրի լայնածավալ քնարկումները սկսվեցին ռուսական իրավաբանական դպրոցի ներկայացուցիչների կողմից միայն վերջին տասնամյակում, որոնք որոշակիորեն ամփոփվեցին Մոսկվայի իավաբանների ակումբի 1997թ փետրվարի 5-ի «Արդարադատության աստվածային արմատները» վերտառությունը կրող նիստում: Քննարկումների արդյունքում ձևավորված գաղափարներն ու եզրահանգումները եկան ժխտելու ինչպես խորհրդային դավանությունը, ըստ որի՝ իշխանությունների բաժանումը և դատական անկախ իշխանության առաջացումը որակվում էր որպես դրամատիրական (բուրժուական) իրավաբաղաբական ուսմունք (դոկտրին), այնպես էլ համաշխարհային իրավագիտության մեջ տիրապետող այն կանխադրույթը, որին համապատասխան դրանք ամբողջովին հանգեցվում էին զուտ աշխարհիկ ուսմունքի, որն իբր ծնվել էր XVII–XVIII դարերի սահմանագծում Շարլ Մոնտեսքիոյի (1689–1755) և Ջոն Լոքի (1632–1703) աշխատություններում: Ընդ որում, ռուս հայտնի իրավագետները և պրակտիկ իավաբանները զուգահեռներ են անցկացրել Աստվածաշնչի ու իշխանությունների բաժանման և օրենսդիր ու գործադիր իշխանություններին հակակշռող, զսպող անկախ

1 Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ. Իրավունքի և օրենքի, դատարանի և արդարադատության աստվածաշնչյան հիմունքները Եր.: Ոսկան Երևանցի, 2008թ., էջ 3-11, 14-16, 48-49, 54-56:

դատական իշխանության վերաբերյալ Կոնֆուցիոսի՝ չինական քաղաքակրթության 2600-ամյա բարոյաքաղաքական ուսմունքի (չինական յուրատեսակ Սուրբ գրքի) միջև և դրանց մեկնությունների (այս դեպքում արդեն իրավագետների կողմից) գիտական վերլուծության միջոցով հիմնավորվեցին Աստվածաշնչի՝ մարդկության պատմության մեջ առաջին Սահմանադրությունը լինելու, դատարանի և արդարադատության անկախության աստվածաշնչյան արմատների առկայության, ավելի քան 3000 տարի առաջ իշխանությունների բաժանման փաստերը: **Առաջ քաշվեց այն հետաքրքիր դրույթը, որ իրավունքը և դատական իշխանությունն առաջնային են (առաջացել են ավելի վաղ), քան աշխարհիկ (օրենսդիր և գործադիր) իշխանությունները:**

Իրավունքի տեսանկյունից մենք առաջին հերթին և գլխավորապես կարևորում ենք աշխարհիկ, այսինքն՝ թագավորական իշխանությունը դատական իշխանությունից բաժանելու պահը, որովհետև դրանից հետո հազարավոր տարիներ օրենսդիր և գործադիր իշխանություններն իրականացրել են թագավորները, որոնք նաև Հին Կտակարանի անկախ դատավորների 3-4 դար գործունեությունից հետո խորհրդային կարգերում լրիվ կամ մասնակիորեն ստվերել են դատական, ինչ-որ չափով նաև հոգևոր իշխանությունը, և որը, դժբախտաբար, ոչ ժողովրդավարական կամ միայն ձևականորեն իրենց ժողովրդավարական հռչակած երկրներում, մասամբ նաև Հայաստանում շարունակվում են մինչև օրս:

Հին Կտակարանի կանոններն անառարկելիորեն ապացուցում են, որ թագավորական իշխանությունն առաջացել է դատական իշխանության հիմնադրումից առնվազն 200 տարի հետո: Ավաճը հաստատելու համար թեև բազմաթիվ մեջբերումներ կարող ենք կատարել բուն Աստվածաշնչից, իսկ Հին Կտակարանն էլ կասկած չի թողնում այն իրողության մասին, որ դատական իշխանությունը ոչ միայն անկախ է եղել, այլև նախորդել է աստվածային-թագավորական, այսինքն՝ օրենսդիր և գործադիր իշխանություններին, սակայն, չնայած դրանց, անժխտելի է նաև այն փաստը, որ այսօր ոչ լրիվ ժողովրդավարական պետաիրավական պրակտիկայում շեշտը դեռևս դրվում է օրենսդիր և գործադիր իշխանությունների վրա: Պետք է խոստովանել, որ դատական անկախ և իշխանության մյուս թևերին հավասարազոր իշխանություն դեռևս չի հաստատվել, հասարակական կարծիքում և պետաիրավական գործունեության մեջ այն իրականում գոյություն չունի, որ ՀՀ-ում սասանված է մարդկանց հավատը ոչ միայն դատական իշխանության, այլև հենց օրենսդիր և գործադիր իշխանությունների նկատմամբ: Որովհետև ՀՀ ԱԺ-ն այսօր էլ ընդունում է երբեմն էական սխալներով ու թերություններով օրենքներ, չի հետևում դրանց պատշաճ կենսագործմանը գործադիր իշխանության մարմինների կողմից, քանի որ վերահսկողական սահմանադրական լծակներ դեռևս չունի, իսկ եղածներն էլ լիարժեք չի օգտագործվում:

Չխորանալով դատական իշխանության անկախության վերաբերյալ

Արիստոտելի, Մաքիավելլոյ և մյուս հանճարեղ մտածողների՝ աստվածաշնչյան գաղափարների վերլուծությունների մեջ՝ միանգամից նշենք, որ դատարանի անկախության աստվածաշնչյան գաղափարների հիման վրա և դրանց համապատասխան էլ հետագա դարերում կառուցվել է քրիստոնյա պետությունների, նաև Հին և միջնադարյան Հայաստանի օրենսդրությունը, և անվիճելի է, որ այդ աղբյուրներից մեկն Աստվածաշունչն էր: Այդ դրույթները որոշակիորեն ազդել են Աթենքի, իսկ վերջինս իր հերթին՝ Հին Հռոմի իրավական համակարգի վրա: Որոշ ընդամիջումներով և վայրիվերումներով անցնելով նարդկության (հասարակության) պատմության միջով՝ իշխանությունների բաժանման և դատական անկախ իշխանության գաղափարներն ու նորմերն իրենց ուղղակի ձևակերպումն են ստացել և գործնական կիրառում գտել ԱՄՆ-ի Սահմանադրության և ամերիկյան օրենսդրության մեջ, այդ երկրի դատական պրակտիկայում: ԱՄՆ-ի Սահմանադրությունը թեև իշխանությունների բաժանման մասին ուղղակի նորմ չի պարունակում, ինչպես որ ասենք՝ արել է այսօրվա Հայաստանը², բայց օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջոցով պետական իշխանության իրականացումը սահմանել է հստակորեն ու դա կիրառվում է: ԱՄՆ-ի սահմանադրական սկզբունքները լրիվ չափով ներառում են գործադիր իշխանության՝ դատական ենթակայության իշխանությունների տարանջատման, դատարանի անկախության աստվածաշնչյան հիմունքները, և որ ամենակարևորն է, հաշվի են առնում ամերիկյան պետության կառուցման հոգևոր հիմունքը: ԱՄՆ գաղթած անգլո-սաքսոնական առաջին նորաբնակները՝ մաքրակրոն ձգնավորականները իրենց հայտարարեցին Աստվածաշնչի, առաջին հերթին՝ Հին Կտակարանի հոգևոր ժառանգները, նրանք իրենց վերաբնակեցումը համեմատում էին Եգիպտոսից հրեաների վերաբնակեցման հետ և քննարկում էին Մասաչուսեթս գաղութում աստվածաշնչյան օրենքների ուղղակի գործողության հարցը, որը և փաստորեն իրացրին ԱՄՆ-ի Սահմանադրության հայրերը: Վերջիններս, չնայած քաջածանոթ էին Շ.Մոնտեսքիոյի և Զ. Լոքի տեսությանը, **այնուամենայնիվ իշխանությունների բաժանման հարցում առաջնորդվեցին Հին Կտակարանով, նույն աստվածաշնչյան հիմունքներով կառուցված Հին Աթենքի և Հանրապետական Հռոմի պետական պրակտիկայով, այսինքն՝ միաժամանակ օգտվեցին երկու աղբյուրներից, ստեղծեցին իրար ոչ ենթակա, փոխկապակցված, մեկը մյուսին հակակշռող և զսպող օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններ, սահմանեցին գործադիր իշխանության ղեկավարի՝ նախագահի պաշտոնակալության երդում ԱՄՆ-ի գերագույն դատարանի նախագահի առջև՝ Աստվածաշնչի վրա:** Եվ մինչև օրս ԱՄՆ-ում իշխանությունների նման տարանջատումը գործնականում կիրառվում է: Գերագույն դատարանը 1974 թվականին փաստորեն լուծեց նախկին նախագահ Ռ. Նիքսոնի ձակատագրի հարցը Ռոյթերգեյթյան, իսկ 2000 թվականին նախագահ Բիլ Քլինթոնի հարցը Մոնիկա Լևինսկոյի հետ կապված գործով:

2 Տե՛ս ՀՀ Սահմանադրություն Երևան 2015թ. էջ 13:

Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրության ակունքներում (ինչպես որ այլ պետությունների սահմանադրություններում) ևս ընկած են պետության, իրավունքի, դատարանի, դատավարության աստվածաշնչյան հիմունքները: Ուրեմն՝ ՀՀ Սահմանադրությամբ հռչակված ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն կառուցելու, իրավական ժխտողականությունը հաղթահարելու և ժողովրդի սասանված հավատը պետության, պետական իշխանության բոլոր թևերի, հատկապես օրենքն ու իրավունքը կիրառող դատարանի նկատմամբ վերականգնելու համար այսօր առավել, քան երբևէ, Հայաստանում կարիք է զգացվում վերստին խորանալու իշխանությունների բաժանման և դատական իշխանության անկախության, նրա կողմից իշխանության մյուս (օրենսդիր և գործադիր) թևերը հակակշեռլու մասին պատմական աղբյուրներում, առաջին հերթին Աստվածաշնչում ամրագրված դրույթների, սկզբունքների մեջ: Վերջիններս անվերապահորեն ընդունվում են միջազգային հանրության կողմից և կիրառվում են ժողովրդավարական երկրների պետաիրավական գործունեության մեջ:

Այսպիսով՝ կասկածից վեր է, որ իշխանության տարբեր ճյուղերի միջև հակակշիռներ և զսպումներ ստեղծելու գաղափարները աստվածային ծագում ու բովանդակություն ունեն, իսկ «Աստծո պատվիրաններին հնազանդվելուն» հորդորելը դատական իշխանության առաջին և պատմական գլխավոր հիմունքներն են, այսօրվա անկախ դատական իշխանության նախադրյալները: Այդպիսին է Աստվածաշնչի հոգևոր, փիլիսոփայական, իրավաբանական մեկնությունների բոլոր հեղինակների միահանուռ կարծիքը: Անհերքելի է նաև այն, որ մարդկային քաղաքակրթության իրավաքաղաքական գաղափարների թվում դրանք դարերի ընթացքում դարձել են համամարդկային արժեք և ծառայում են պետական ղեկավարման մեջ ժողովրդավարության զարգացման նպատակներին բառիս ամենալայն իմաստով:

Իշխանությունը հասարակական կյանքի կարևորագույն և մշտապես գոյություն ունեցող երևույթներից է: Պատահական չէ, որ սկսած հնագույն ժամանակներից՝ տարբեր դարաշրջանների և տարբեր ժողովուրդների մտածողները մեծ ուշադրություն են նվիրել իշխանության հիմնահարցերին: Նրանցից շատերը փորձել են բացահայտել իշխանության էությունը, գտնել նրա արմատները, սահմանել բնույթը, պարզաբանել նրա իրականացման մեխանիզմը, միջոցներն ու մեթոդները: Եվ հնում արդեն առանձին մտածողներ իշխանության մասին իրենց դատողություններում ճիշտ էին նկատում այդ երևույթին բնորոշ շատ տարբեր: Եվ որովհետև պետական իշխանության էությունն առավել ցայտուն դրսևորվում է նրա գործառնություններում, այդ պատճառով էլ պետության և իրավունքի տեսաբանները առաջին հերթին առանձնացնում էին պետական իշխանության **կարգավորիչ, կազմակերպչական, պահպանական կամ պահպանիչ** գործառնությունները³:

Պետական իշխանության էությունն ու բնույթը դրսևորվում են նաև նրա

3 Տե՛ս Խաչատրյան Հ.Ն. Իշխանությունների տարանջատում և պառլամենտարիզմ: Եր.: «Արեգ» 1994թ. էջեր 5-25:

իմանենտ (ներքնապես հատուկ) հատկություններում: Նախ՝ պետական իշխանությունը ինքնիշխան (սուվերեն) բնույթ ունի, այսինքն՝ նա իր գործառույթներն իրականացնելիս ինքնուրույն է և անկախ ամեն մի այլ իշխանությունից ինչպես երկրի ներսում, այնպես էլ այլ պետությունների հետ ունեցած հարաբերություններում: Երկրորդ՝ «Պետական իշխանություն» կատեգորիան իր էությամբ և բովանդակությամբ միասնական է. նման պարագայում ինչպես հասկանալ «իշխանությունների տարանջատում» հասկացությունը և չկան արդյոք հակասականություն: Հարկ է նկատի ունենալ, որ պետական իշխանությունը բաժան-բաժան չի արվում, չի տրոհվում, որն ի դեպ գործնականում հնարավոր չէ միասնական պետության պայմաններում: Խոսքը գործառույթների և իշխանության կառուցվածքների լիազորությունների խստիվ սահմանազատման մասին է, որպեսզի ապահովվի իշխանություններից յուրաքանչյուրի անկախության բարձր աստիճանը, հակակշիռների և զսպումների համակարգի ստեղծումը՝ բացառելով այդ իշխանություններից որևէ մեկի կողմից ամբողջ իշխանության բռնատիրումը: **Սրանում է իշխանությունների տարանջատման տեսության գլխավոր իմաստը**, որը, ինչպես արդեն վերը նշվեց, աստվածային ծագում և բովանդակություն ունի, սակայն դասական տեսքով ձևակերպվել է անգլիացի փիլիսոփա և քաղաքագետ Ջ. Լոքի և ֆրանսիացի ականավոր լուսավորիչ, իրավագետ Շ. Մոնտեսքիոյի³ կողմից: Վերջինս գտնում էր, որ ազատությունը, որի տակ նա հասկանում էր իրավունք ունենալ անելու այն ամենը, ինչը թույլատրված է օրենքներով, կարող է ապահովված լինել միայն այն պետության մեջ, որտեղ գոյություն ունի իշխանությունների տարանջատում: Մոնտեսքիոն տարբերում է երեք իշխանություն՝ օրենսդիր, գործադիր և դատական: Հետագայում այս տեսության հետևորդները ավելացրին նաև չորրորդը՝ մունիցիպալ իշխանությունը, որը, սակայն, տարածում չստացավ:

Իշխանությունների տարանջատման տեսության առաջադիմական նշանակությունը նախ և առաջ նրա հակամիապետական միտվածության մեջ էր:

Իշխանությունների տարանջատման իր ըմբռնման էությունը Մոնտեսքիոն արտահայտել է հետևյալ կերպ. «**Եթե օրենսդիր ու գործադիր իշխանությունները միացված լինեն մեկ անձի կամ հաստատության մեջ, ապա ազատություն չի լինի, քանի որ կարելի է երկյուղել, որ այդ միապետը կամ սենատը կարող են բռնակալական օրենքներ հրապարակել, որպեսզի դրանք կիրառեն նույնպես բռնակալորեն: Ազատություն չի լինի նաև այն դեպքում, եթե դատական իշխանությունը բաժանված չլինի օրենսդիր և գործադիր իշխանություններից**»⁴: Այսպիսով՝ Մոնտեսքիոն պաշտպանում էր երեք իշխանությունների անհրաժեշտության գաղափարը, այդ թվում դատական, որն իրականացնում է մի առանձին հաստատություն՝ դատարանը:

Իշխանության տարանջատման տեսությունը իր նախնական մեկնաբանությամբ առավել լիարժեք ու հետևողական իրացվեց ԱՄՆ-ի 1787 թվա-

4 Sten Monteskje III., Избранные произведения. М., 1955г., էջ 290-295:

կանի սահմանադրությամբ: Այստեղ օրենսդրական լիազորություններ են ընձեռված Կոնգրեսին, որը բաղկացած է երկու պալատից՝ (հոդվ. 1) Սենատից և Ներկայացուցիչների պալատից: Գործադիր իշխանությունը իրականացնում է ԱՄՆ-ի նախագահը՝ (հոդվ. 2), իսկ Միացյալ Նահանգների դատական իշխանությունը իրականացնում են՝ Գերագույն դատարանը և այն ցածրաստիճան դատարանները, որոնք ժամանակ առ ժամանակ հիմնում է Կոնգրեսը (հոդվ. 3):

ԱՄՆ-ի սահմանադրական կարգին բնորոշ է կազմակերպական առանձնացման բարձր աստիճանը: Այսպես՝ նախագահը և նրա կառավարության անդամները իրավունք չունեն Կոնգրեսի պալատների անդամ լինելու և մասնակցելու քվեարկություններին: Նախագահը օժտված չէ օրենսդրական նախաձեռնության իրավունքով: Կոնգրեսը և նախագահն ընտրվում են առանձին-առանձին: Կառավարության անդամները պատասխանատու են միայն նախագահի առաջ:

Մյուս կողմից՝ գործում է «զսպումների և հակակշիռների» համակարգը: Օրենքներն ընդունվում են Կոնգրեսում, բայց յուրաքանչյուր օրենք ներկայացվում է նախագահին, որը կարող է այն չստորագրել և իր առարկություններով վերադարձնել պալատ, որտեղ ընդունվել է օրենքը (վետոյի իրավունք): Վերջնական խոսքը պատկանում է Կոնգրեսին, որը կարող է հաղթահարել վետոն: Նախագահն օժտված է միջազգային պայմանագրեր կնքելու իրավունքով, որոնք, սակայն, պետք է հավանության արժանանան Սենատում ներկա գտնվող սենատորների երկու երրորդի կողմից: Նախագահը նշանակում է դեսպաններին, բարձրագույն պաշտոնատար մյուս անձանց և Գերագույն դատարանի դատավորներին, բայց դա պետք է անի «Սենատի խորհրդով և համաձայնությամբ»: Գերագույն դատարանն իրավունք ունի ոչ Սահմանադրական հայտարարել Կոնգրեսի և Նախագահի ակտերը:

«Զսպումների և հակակշիռների համակարգը» ԱՄՆ-ի սահմանադրական կարգի գործող բաղադրատարն է, այն փոխադրած վերահսկողության հնարավորություն է ընձեռում, պայմաններ ստեղծում երեք իշխանությունների փոխզործակցության համար:

Պետք է նշել, որ բազմաթիվ նորագույն սահմանադրություններում իշխանությունների բաժանման (տարանջատման) տեսության իրականացման ձևերը խիստ բազմազան են: Եթե փորձենք ընդհանրացնել արդի սահմանադրական պրակտիկան, ապա կարելի է ի հայտ բերել իրարից փոքր ինչ տարբերվող ելակետային դիրքորոշումներ: Այն դեպքում, երբ որոշ երկրներում մինևույն անձի մեջ իշխանության տարբեր ճյուղերի գործառնությունների գուգակցումը անթույլատրելի է համարվում, ուրիշ երկրներում արմատավորվել են այլ ավանդույթներ, և նախարարները, որպես կանոն, խորհրդարանի (պառլամենտի) անդամ են: Մի շարք պետություններում բացառվում է գործադիր իշխանությանը օրենք հրապարակելու իրավունքով օժտելու հնարավորությունը: Բայց երկրներ էլ կան, որոնցում որոշակի պայմաններ

րում թույլատրելի է ինչպես ուղղակի, այնպես էլ պատվիրակված օրինաստեղծ գործունեությունը գործադիր կառույցների (նախագահ և կառավարություն) կողմից:

Հարկ է նշել, որ իշխանությունների տարանջատման սկզբունքը չէր ընդունվել մարքսիզմի կողմից: Ավելին, երկար տարիներ այն մերժում և քննադատում էին որպես խորթ և անընդունելի տեսություն:

Բանն այն է, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հաստատվեց պետական մի կառուցակարգ (մեխանիզմ), որը համապատասխանում էր պրոլետարիատի դիկտատուրայի էությանն ու խնդիրներին: Նրա հիմքը, հետագայում նաև ողջ հասարակության քաղաքական հիմքը հայտարարվեցին խորհուրդները: Հատկապես ընդգծվում էր, որ դրանք հնարավորություն են տալիս միահյուսելու պառլամենտարիզմի և անմիջական ժողովրդավարության դրական կողմերը, այսինքն՝ ի դեմս ժողովրդի ընտրովի ներկայացուցիչների՝ միացնելու և՛ օրենսդիր, և՛ գործադիր գործառույթները: Լենինի նշանավոր ձևակերպումը՝ **«Ոչ թե պառլամենտական հանրապետություն, այլ խորհուրդների հանրապետություն»**, նշանակում էր հրաժարվել ոչ միայն ներկայացուցչական հաստատություններից, այլև պետական իշխանության ինստիտուցիոնալ կառույցներից որպես այդպիսիք: «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին» սկզբունքն արտացոլված էր խորհրդային բոլոր սահմանադրություններում և կարևորագույն օրենքներում: Այդ պայմաններում չէին կարող զարգանալ իշխանությունների տարանջատման և պառլամենտարիզմի խնդիրներին նվիրված գիտական մշակումները: Այս տեսությունը մերժվում էր պաշտոնական գաղափարախոսության կողմից և, որպես կանոն, անվստահությամբ էր ընկալվում հասարակական գիտակցության կողմից, ինչը հաճախ սխալ մեկնաբանությունների հետևանք էր:

XIX դարի եկրորդ կեսում միայն նախկին գաղափարական հիմնադրությունների վերանայումով և իրավական պետություն կառուցելու անհրաժեշտությամբ կացությունն արմատապես փոխվեց: Հնարավոր դարձավ հետևողականորեն մշակել իշխանությունների տարանջատման և պառլամենտարիզմի հիմնահարցերը,

Իշխանությունների տարանջատման տեսության ու գործնական կիրառման ուսումնասիրությունը վերջին հաշվով հանգում է քաղաքակրթության համամարդկային արժեքներին դիմելուն: Ժամանկը ցույց տվեց, որ ճշմարտության գլխավոր չափանիշը դասակարգային ուղղվածության մեջ տեսնելը ոչ միայն անհիմն էր, այլև յուրատեսակ կոշտ սահմանափակիչ դարձավ գիտական հետազոտությունների ասպարեզում: **Գիտությունը չի կարող բաց չլինել համաշխարհային փորձի առջև, չօգտագործել հրատապ խնդիրների առավել արդյունավետ արտասահմանյան լուծումները:**

Հասարակության զարգացման ամեն մի նոր պատմական փուլում իշխանությունների տարանջատման տեսության մեջ երևան են գալիս ինչ-ինչ գծեր, որոնք առանձնակի հրատապություն ու սրություն են ստանում: Եր-

բեմն դրանց վրա է սևեռվում քաղաքագետների և գիտնականների լուրջ ուշադրությունը: Եվ, այդուհանդերձ, նրանում կան հաստատուն մեծություններ, որոնք կազմում են նրա հիմնականախթն ու էությունը, կանխորոշում նրա «երկարակեցությունը»: Ժամանակակից պայմաններում ցանկալի կլինեն ուշադրություն դարձնել այն երեք «բաղկացուցիչ մասերի» վրա, որոնք փոխկապակցված ու փոխհամաձայնեցված, անխզելի միասնություն են կազմում:

Նախ՝ իշխանությունների տարանջատման տեսությունը տակավին միտված է այն բանին, որ կանխվի իշխանություններից մեկնումեկի գերազանցությունը մյուսների նկատմամբ, անձնիշխանության և բռնապետական վարչակարգի հաստատումը:

Երկրորդ՝ իշխանությունների տարանջատման տեսությունը «գսպումների ու հակակշիռների» համակարգ է նախատեսում նաև այն բանի համար, որ նվազագույնի հասցվեն կառավարման հնարավոր սխալները, մոտեցման միակողմանիությունը կամ գերատեսչականությունը:

Երրորդ՝ նշված գործառույթներով կոռպերացվում են փոխադարձ ձգտումներն ու գործողությունները:

Միաժամանակ պետք է նշել, որ իշխանությունների տարանջատման տեսությունը իդեալական սխեմա չէ, որը գործում է միայն լաբորատոր պայմաններում: Համաշխարհային պատմության մեջ կարելի է գտնել դրա միջոցով դժվարին ու բարդ խնդիրների լուծման բազում օրինակներ:

Հարկ է ընդգծել իշխանությունների տարանջատման տեսության մի կարևոր դրույթ ևս: Այդ տեսությունը չի զբաղվում իշխանությունների կարգորոշմամբ, դրանց միջև հարաբերությունների հիերարխիայով: Պատահական չէ, որ ԱՄՆ-ի տարբեր համալսարաններում սահմանադրական իրավունքի դասընթացներում «իշխանությունների» ուսումնասիրությունը միանման չի կառուցվում: Եթե հետևենք ԱՄՆ-ի սահմանադրական իրավունքի առավել հեղինակավոր և հանրահայտ մի դասընթացի, որը գրել է Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Լ. Թրայբը, ապա ոչ մեծ ընդհանուր ներածությունից հետո այն պետք է սկսել դատական իշխանությունից: Մյուս երկրների մեծ մասում առաջնությունը տրվում է օրենսդիր իշխանությանը: Դա բնորոշ է Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային, Գերմանիային, Հայաստանին և այլ երկրների:

Ըստ երևույթին անվերջանալի են վեճերն այն հարցերի շուրջ, թե իշխանություններից որն է գլխավորը, առաջնայինը, կարևորագույնը: Բայց բանն այդ չէ: **Իշխանությունների տարանջատման իմաստը հենց այն է, որ հնարավոր լինի խուսափել իշխանությունների հակամարտությունից, վերին աստիճանը բարձրանալու նրանց ձգտումից ու բախումներից:** Պետական տարբեր մարմինների միջև գործառնություններն այնպես են բաշխվում, որի դրանք անհրաժեշտ միասնություն, փոխկապակցված համակարգ կազմեն, որպեսզի ապահովվի պետական գործերի ներդաշնակ կառավարումը: Ահա թե ինչու պառլամենտարիզմի հայեցակարգի հիմքում ընկած է իշխանությունների բաժանման (տարանջատման) սկզբունքը:

ПРОБЛЕМЫ РАЗДЕЛЕНИЯ ВЛАСТЕЙ И ПАРЛАМЕНТАРИЗМА В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИИ РА

Мартын Манукян

*Преподаватель кафедры права Международного
университета Евразия*

Измененная Конституция РА заставила задуматься над темой необходимости снова и снова обратиться к проблемам разделения властей и парламентаризма, а также вопросам научной разработки их юридических аспектов.

В статье подчеркиваются происхождение и развитие исторических источников законодательных, исполнительных и судебных властей, взаимная связь ветвей этих властей, их система сдержек и противовесов.

Ключевые слова: разделение властей, парламентаризм, Конституция, библейские основы, законодатель, исполнитель, судебный, царская власть, Библия, первая письменная Конституция в мире.

PROBLEMS OF SEPARATION OF POWERS AND PARLIAMENTARISM IN THE CONTEXT OF THE CONSTITUTION OF THE REPUBLIC OF ARMENIA

Martin Manukyan

*Lecturer of the Law Department at Eurasia
International University*

The amended constitution of the Republic of Armenia made us consider the need of addressing the problems of separation of powers and parliamentary, as well as the scientific elaboration of their legal aspects.

The article emphasizes the origin and development of historical sources of legislative, executive and judicial authorities, the interconnection of the branches of these authorities, their system of checks and balances.

Key words: separation of powers, parliamentary, Constitution, biblical foundations, legislator, executor, judicial, royal power, the Bible, the first written Constitution in the world.